

Եղիաշին հոկայ մատենագարանը իր թանկարժէք գիրքերով, ինչպէս կարելոք ձեռագիրներ, կը մնային Տիկին Նիսրնի քով, որ մինչև իմ Պոլսէն մեկնելս, չէր ուզած զանոնք յանձնել եւ ոչ իսկ անոր հօրեղբորսրդուց, պարզապէս սրբապղծութիւն նկատելով ու է է չայ մօտեցնել այդ նուիրական բաներուն:

Եղիաշի մահուան հետ Տիկին Նիսրնի

մտասեւեռումն ալ մնաց իր տածած հակահրութիւնը Հայերու մասին, որ չկրցան, կ'ըսէր, տէր դառնալ իրենց մեծ գրադէտին:

ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

Նիւ Եորք, 1926

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Այսքան մինա՛կ, մեկուսի՛ ինքզինքս երբե՛ք չեմ գրտած:
 Յուսացի երազներս գէթ քիչ մ'երկայն կը տեսն,
 Բայց թողուցի՛ն, հեռացա՛ն: Մենաբանիս ալ յանկարծ
 Դրոններն ամէն փակուեցան՝ մէկը միւսին հտելէն:

Հիմա՛ դուրսի բաներէն, ծաղիկներէն, ծառերէն,
 Աղբիւրներու կարկաջէն, երգէ՛ն անգամ ծիտերուն,
 Ես բաժնըւած եմ իսպառ, ու զիս հըլու կը վարեն
 Տըղմուտներու մէջ ցրկնած խեռ տենչանքներ վատանուն:

Նիրհող ուժերըս սակայն պիտի գէնքի կանչեմ ես,
 Ու ոգորի՛մ, մաքառի՛մ, մինչեւ դիակը փրոնեմ
 Բընագզիս խորթ ծագերուն ու զիս մաքրեմ կեղտերէս:

Պիտի կամքիս ու մըտքիս յաղթ մուրճներուն զարկին դէմ՝
 Փականքները խորտակեմ ճըզնարանիս զրոններուն,
 Ու արեւի՛ն վազեմ ես՝ կեանքի սիրով պատարուն: